Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 23-ի N 243-Ն որոշման

ՑԱՆԿԻ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՄԱՆ, ՑԱՆԿԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԴՐԱ ԽՄԲԱԳՐՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԵՌԱՄՍՅԱԿ ԻՐԵՆՑ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ՑԱՆԿԻ ԽՄԲԱԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ՝ ՑԱՆԿՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Անշարժ գույքի պետական ռեգիստրը եռամյա ժամկետում կայքէջում և համակարգում նախատեսված առանձնացված բաժնում տեղադրում է մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կիրառված և գործող սահմանափակումների վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության ցանկը և ապահովում դրա համընդհանուր հասանելիությունը՝ որոնման և դիտման հնարավորությամբ, իսկ սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններին (բացառությամբ դատարանների)՝ նրանց իրավասության սահմաններում գտնվող սահմանափակումների խմբագրման հնարավորությամբ:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ցանկ՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կիրառված և գործող սահմանափակումների վերաբերյալ անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության ցանկ.

2) սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձ՝ սույն որոշման N 1 հավելվածի 2-13-րդ կետերին համապատասխան համակարգում գրանցում ստացած անձը:

3. Ցանկը պետք է պարունակի՝

1) սահմանափակման օբյեկտ հանդիսացող իրավունքի սուբյեկտի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, անձնագրի սերիան և համարը, նույնականացման քարտի դեպքում՝ հերթական համարը, հանրային ծառայության համարանիշը, իրավաբանական անձանց դեպքում՝ լրիվ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը կամ գրանցման համարը.

2) անշարժ գույքի միավորի հասցեն կամ կադաստրային ծածկագիրը կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը.

3) սահմանափակում նախատեսող իրավական ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը (առկայության դեպքում), այն ընդունող մարմնի անվանումը, պաշտոնատար անձի անունը և ազգանունը, դատական գործի համարը կամ կատարողական վարույթի համարը, իսկ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կիրառվող սահմանափակումների դեպքում՝ քրեական վարույթի համարը:

4. Սույն հավելվածի 3-րդ կետում նշված որևէ տվյալի բացակայության կամ անշարժ գույքի պետական ռեգիստրի տեղեկատվական բազայում առկա չլինելու դեպքում ցանկի համապատասխան բաժնում նշում է կատարվում տվյալի բացակայության մասին:

5. Ցանկում նոր սահմանափակումը լրացնում է սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը:

6. Կայքէջում հրապարակված ցանկում ներառված սահմանափակումները կարող են որոնվել սույն կետի 1-ին կամ 2-րդ ենթակետով նշված տվյալների միաժամանակյա մուտքագրմամբ՝

1) սահմանափակման օբյեկտ հանդիսացող իրավունքի սուբյեկտի, որի համար որոնման դաշտերում լրացվում են սուբյեկտի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը կամ անձնագրի

սերիան և համարը, նույնականացման քարտի դեպքում՝ հերթական համարը կամ հանրային ծառայության համարանիշը, իրավաբանական անձանց դեպքում՝ լրիվ անվանումը կամ հարկ վճարողի հաշվառման համարը կամ գրանցման համարը, ինչպես նաև անշարժ գույքի միավորի, որի դեպքում որոնման դաշտերում լրացվում են միավորի հասցեն կամ կադաստրային ծածկագիրը կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը.

2) սահմանափակում նախատեսող ակտի, որի դեպքում որոնման դաշտերում լրացվում են ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը (առկայության դեպքում), այն ընդունող մարմնի անվանումը կամ պաշտոնատար անձի անունը և ազգանունը, կամ դատական գործի համարը կամ կատարողական վարույթի համարը, իսկ քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում կիրառվող սահմանափակումների դեպքում՝ քրեական վարույթի համարը:

7. Սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները (բացառությամբ դատարանների), սույն հավելվածի 8-11-րդ կետերով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ, իրենց իրավասության սահմաններում, համակարգում ցանկը տեղադրվելուց հետո, երկու տարվա ընթացքում խմբագրում են ցանկը՝ լրացնելով այն սահմանափակումները, որոնք առկա չեն ցանկում, սակայն առկա են դրանք կիրառելու հիմքերը, և հանելով այն սահմանափակումները, որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերով ենթակա չեն պահպանման: Նշված ժամկետը լրանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում անշարժ գույքի պետական ռեգիստրը համակարգում արգելափակում է ցանկի խմբագրման հնարավորությունը:

8. Ցանկի խմբագրման հնարավորությունն արգելափակելուց հետո եռամսյա ժամկետում ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ցանկում առկա գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների նկատմամբ սահմանափակումներ լրացնելու կամ հանելու վերաբերյալ իրենց դիմում-բողոքները ներկայացնում են սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններ:

9. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված դիմում-բողոքները ներկայացվում են գրավոր՝ նշելով ծանուցման էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ բացակայության դեպքում՝ ծանուցման հասցեն, հիմնավորելով ցանկում սահմանափակում ավելացնելու կամ հանելու անհրաժեշտությունը և առկայության դեպքում կցելով ներկայացված հիմնավորումների վերաբերյալ ապացույցներ:

10. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված դիմում-բողոքները սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները քննարկում են դրանք ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում և կայացնում առկա սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին կամ դիմում-բողոքը մերժելու մասին որոշում, որոնք ուղարկվում են դիմում-բողոքը ներկայացրած անձի էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ դրա բացակայության դեպքում՝ փոստային ծառայության միջոցով՝ դիմում-բողոքում նշված ծանուցման հասցեին՝ պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու հնարավորություն ընձեռող եղանակով: Ելնելով ներկայացված փաստաթղթերի մեծածավալությունից, բարդությունից կամ այլ անհրաժեշտությունից՝ սույն կետում նշված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 աշխատանքային օրով:

11. Ցանկում գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների նկատմամբ սահմանափակումներ լրացնելու կամ հանելու վերաբերյալ դիմում-բողոքների մասին հաղորդումը, դիմում-բողոքների լուծման արդյունքում կազմված սահմանափակումը դադարեցնելու կամ սահմանափակում կիրառելու մասին որոշումն այն կայացնելուց հետո 1-օրյա ժամկետում ներկայացվում է անշարժ գույքի պետական ռեգիստր՝ սույն որոշման N 2 հավելվածին համապատասխան:

12. Անշարժ գույքի պետական ռեգիստրը ցանկը խմբագրելու հնարավորությունը սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմիններին (բացառությամբ դատարանների) ապահովում է սույն որոշման N 1 հավելվածի 2-13-րդ կետերին համապատասխան:

13. Ցանկից որևէ սահմանափակում հանելու անհրաժեշտության դեպքում սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձը ցանկից խմբագրում է՝ հանե-

լով տվյալ սահմանափակմանը վերաբերող տվյալները՝ սույն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով ներկայացնելով սահմանափակումը վերացնելու մասին որոշումը:

14. Սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները սահմանափակումների փաստաթղթերը սույն որոշման N 2 հավելվածին համապատասխան ներկայացնում են անշարժ գույքի պետական ռեգիստր, եթե առկա են սահմանափակումը պահպանելու հիմքեր:

15. Սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինների լոկալ կառավարիչները յուրաքանչյուր եռամսյակ իրենց կողմից ներկայացվող մարմիններում կատարած ցանկի խմբագրման աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը եռամսյա ժամկետը լրանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում են համակարգի՝ տվյալ մարմնի համար առանձնացված բաժնում:

16. Սույն հավելվածի 15-րդ կետում նշված տեղեկատվության մաս են կազմում ցանկում լրացված կամ դրանից հանված սահմանափակումների վերաբերյալ վերլուծական և ամփոփ (կիրառված կամ հանված սահմանափակումների ընդհանուր քանակը, սահմանափակումների քանակն ըստ դրանց տեսակի) տվյալները:

17. Անշարժ գույքի պետական ռեգիստրն իրականացնում է սույն հավելվածի 15-16-րդ կետերով սահմանված տեղեկատվության հաշվառում, տեղեկատվությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դրանում ներառում է նաև իր կատարած աշխատանքների և խմբագրումների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվությունը և այն տեղադրում կայքում, ապահովում է դրա հասանելիությունը սահմանափակում կիրառելու կամ դրանք դադարեցնելու իրավասություն ունեցող մարմիններին՝ սահմանափակման փաստաթղթեր մուտքագրող անձանց միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ